

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱԲԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐԸ (1915-1917 ԹԹ.)

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պ. գ. դ. Կիրակոսյան Ա. Ջ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ. գ. դ. Մալմուրյան Գ. Գ.
պ. գ. թ., դոցենտ Ղամբարյան Ա. Վ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հոկտեմբերի 7-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 004 մասնագիտական խորհուրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հուլիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ. Ղ. Մուրադյան

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՆԻԹՅՈՒՆՆԸ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ցեղասպանության ուսումնասիրումը՝ իր բազմաթիվ առումներով և դիտանկյուններով չի կորցնում իր արդիականությունը հայ պատմագրությունում արդեն մի քանի տասնամյակ և նորություն չի լինի այն պահումը, որ նրա բազմաթիվ հանգամանքներն ու առնչություններն այլ՝ համեմատաբար լավ լուսաբանված թեմաների հետ դեռ նոր են բացվում և նորություն են մանավանդ հայաստանյան պատմագիտական մտքում: Հայոց ցեղասպանության ուսումնասիրման առումով ամերիկյան դիվանագետներ, միսիոներներ և այլ անձանց կողմից ցեղասպանական գործողությունների փաստագրումը, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներին պաշտոնական դիրքորոշման և արձագանքի պատմական ուսումնասիրությունն ունեն կարևոր պատմագիտական, իսկ ներկա քաղաքական իրողությունները հաշվի առնելով՝ նաև որոշակի քաղաքական նշանակություն:

Եթե 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ-ամերիկյան բազմաբնույթ շփումները և ամերիկահայ համայնքի պատմությունը քիչ թե շատ ուսումնասիրվել են խորհրդային, մասամբ և՛ հետխորհրդային ժամանակաշրջաններում, ապա 1915-1917թթ. Հայոց ցեղասպանության նկատմամբ ամերիկյան արձագանքի հարցը հայ պատմագրության մեջ մնում է սակավորեն ուսումնասիրված թեմա: Սույն թեմայով զբաղվել են հպանցիկորեն, հաճախ Հայոց ցեղասպանությանը Մեծ տերությունների՝ հիմնականում հասարակական արձագանքը ներկայացնելիս, երբեմն էլ՝ հիմնվելով Օսմանյան կայսրությունում 1913-1916թթ. ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի հուշերի վրա, ներկայացվել են ամերիկյան դիրքորոշումը որոշ չափով արտացոլող պատառիկներ, որոնք չէին կարող համարժեք և ընկալելի պատկերացում տալ Հայոց ցեղասպանության նկատմամբ ամերիկյան արձագանքի մասին: Թեման միայն վերջերս է սկսել լրջորեն ուսումնասիրվել՝ շնորհիվ մինչ այդ ամերիկյան ազգային և միսիոներական արխիվներում սփյուռքահայ հետազոտողների հրատարակած և աշխատանքների, ինչպես նաև վերջերս լույս տեսնող պատմագիտական հետազոտությունների:

ԱՏՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայացվող հետազոտության հիմնական նպատակն է՝ 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի շահերն ու հետաքրքրությունների խորապատկերի վրա հանգամանալից պարզել և վերլուծել 1915-1917թթ. Հայոց ցեղասպանության նկատմամբ ամերիկյան քաղաքական, հասարակական և մարդասիրական արձագանքը, դրա և աշխատանքային և այդ շրջանակում որոշակի գործողությունների դրդապատճառները: Այդ նպատակով կարևորում ենք ընթացիկ մի քանի խնդիրների պարզաբանումն ու լուսաբանումը, մասնավորապես՝

1. Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում ԱՄՆ-ի շահերն ու հետաքրքրությունները և դրանցում հայերի դերը
2. Հայոց ցեղասպանության տեղեկագրումը ԱՄՆ, այդ փաստերի մատուցումը ամերիկյան հասարակությանը
3. Հայոց ցեղասպանության նկատմամբ պաշտոնական վաշխն գտնելի՝ վիստի վարչակազմի և կոնգրեսի դիրքորոշումը, այդ դիրքորոշման դրդապատճառները
4. Հայոց ցեղասպանությունն նկատմամբ ԱՄՆ-ի հասարակական արձագանքը, Հայոց ցեղասպանության լուսաբանումը ամերիկյան մամուլում

5. Հայոց ցեղասպանության նկատմամբ մարդասիրական արձագանքը և դրանում պաշտոնական վաշինգտոնի մասնակցությունը

Թեև հետազոտության ուսումնասիրման նյութը շատ դեպքերում ամերիկյան արձագանքի ոչ-պաշտոնական, հասարակական կողմն է, սակայն աշխատանքում առանցքային թեման մնում է Հայոց ցեղասպանության նկատմամբ արձագանքներում ամերիկյան պաշտոնական դիրքորոշումը, քանզի ինչպես հետազոտությունն է ցույց տալիս, ոչ-պաշտոնական արձագանքը չի եղել լրիվ ինքնաբերական, այլ կառավարվել է, իսկ երբեմն էլ՝ ուղղորդվել: Ամերիկյան ոչ-պաշտոնական արձագանքի ներկայացման մեջ նախապատվությունը տրվել է դրանում պետական մարմինների մասնակցության հանգամանքին: Հասարակական արձագանքը ներկայացնելիս նաև հաշվի է առնվել այն «ձևավորողները» պաշտոնական կամ անձնական կապերը ԱՄՆ-ի պետական գերատեսչություններին կամ բարձրաստիճան պաշտոնյաներին հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԾՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. Հետազոտության մեթոդաբանական հիմքում արևելյան փաստաթղթերի, հուշագրությունների և օրագրերի՝ իբրև սկզբնաղբյուրների համեմատական բովանդակային հետազոտությունն է, ինչը լրացվում է մամուլի (հիմնականում ամերիկյան), ինչպես նաև երկրորդական աղբյուրների՝ գիտական աշխատությունների և հոդվածների նույնանման հետազոտությամբ: Դիվանագիտական և այլ վավերագրերը որոշ դեպքերում ուսումնասիրվել են՝ նկատի ունենալով նույն փաստը նկարագրելիս բառական արտահայտչամիջոցները, հռետորաբանությունը, իսկ մամուլի նյութը ուսումնասիրելուց՝ բացի բովանդակային վերլուծությունից, ուշադրության են արժանացել նաև անդրադարձի քանակական փոփոխությունները որոշակի ժամանակահատվածներում:

Հետազոտությունում շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է մասամբ ժամանակագրական, մասամբ էլ՝ թեմատիկ սկզբունքներով: Քանի որ դժվար կլիներ միաժամանակ ընթացող մի քանի գործընթացների շղթայում առանձին իրադարձությունների ներկայացումը խիստ ժամանակագրական և հաջորդականությամբ, ներկայացման հաջորդականության համար որպես ընդհանուր սկզբունք է ընտրվել այս կամ այն գործընթացի, այլ ոչ թե առանձին իրադարձության ժամանակագրությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ. Ներկայացվող հետազոտության թեման է ԱՄՆ-ի արձագանքը Հայոց ցեղասպանությանը 1915-1917 թթ.: Թեմայի ժամանակագրական սահմանների համար որպես հիմք ընդունել ենք մի կողմից՝ Հայոց ցեղասպանության ակտիվ փուլի սկիզբը և մյուս կողմից՝ 1917թ. ապրիլին ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև դիվանագիտական հարաբերությունների խզումը, թեև նյութի տրամաբանությունից ելնելով՝ երբեմն դուրս ենք եկել նշված ժամանակագրական շրջանակներից: 1917թ.՝ որպես հետազոտության ժամանակագրական սահմանի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 1917թ. ապրիլից ԱՄՆ-ի՝ պատերազմի մեջ մտնելով ամերիկյան ներկայությունը Օսմանյան կայսրությունում հասավ նվազագույնի, ինչպես նաև փաստացիորեն դադարեց ամերիկյան ազդեցությունը օսմանյան կառավարության և նրա հայ քաղաքացիների միջև հարաբերությունների վրա: Մինչդեռ հաջորդ՝ 1918 թվականն ԱՄՆ-ի ողջ մերձավորարևելյան և հայերի նկատմամբ քաղաքականությունում եղավ շրջադարձային փուլ, ինչը սակայն այլ ուսումնասիրման թեմա է և չի կարող ըստ արժանվոյն հետազոտվել ներկայացվող թեմայի հետ մեկտեղ մեկ ատենախոսությունում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսության թեման՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման շարունակվող ընթացքի և դրանում ԱՄՆ-ի կարևորագույն դերի պայմաններում խիստ արդիական է հայկական պետականության և համայն հայության

համար: Ատենախոսությունում ներկայացվող դրույթներն ու եզրակացությունները կարող են կարևոր լինել գեղասպանությունների և մարդկության դեմ այլ հանցագործությունների ժամանակ միջազգային հանրության և մեծ տերությունների դերի, նրանց միջամտելու պարտավորության, այդ իրավիճակներում հասարակական կարծիքի կարևորության մասին ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հետևությունների համար: Ատենախոսության որոշ դրվագներ կարող են կարևոր լինել Հայոց գեղասպանությանը կամ լայն առումով գեղասպանություն ներույթով հետաքրքիր մասնագետներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց գեղասպանության աղբյուրագիտության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական ընդհանր լուսաբանվել են հեղինակի հրատարակած 4 հոդվածներում և է գրքույկում, ինչպես նաև հանրապետական ու միջազգային գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Հայկական հարցի և Հայոց գեղասպանության հետ ԱՄՆ-ի առնչության մասին մինչ այժմ ստեղծվել է համեմատաբար ծավալուն վերլուծական և փաստագրական գրականություն, որը սկզբնավորվել է դեռ 1920-ականներին, երբ իրադարձությունների տպավորությունները թարմ էին:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների, իսկ հպանցիկորեն նաև հայերի և Հայկական հարցին անդրադարձնելու կան 1930-ականներին լույս տեսած Հարրի Հովարդի, Լեյանո Ջ. Գորդոնի շախատություններում¹:

Միջազգային ասպարեզում Հայկական հարցի մասին «մոռացման» մի քանի տասնամյակից հետո, երբ թեմային առնչվել են շատ քչերը և այն էլ՝ հպանցիկ կերպով, 1960-ականներից, ԱՄՆ-ում ինչպես ամերիկահայ այնպես էլ այլ ամերիկացի հետազոտողների շրջանում թեմայի նկատմամբ որոշակի հետաքրքրություն արթնացավ:

Ամերիկյան մի քանի հետազոտողների հիմնարար աշխատությունները միսիոններն են, ինչպես նաև ամերիկա-թուրքական հարաբերությունների մասին պարունակում էին ամբողջ գլուխներ և տասնյակ էջեր՝ նվիրված մեզ հետաքրքրող թեմային՝ իր ամենալայն ընդգրկմամբ: Այդպիսի հետազոտությունների շարքին կարելի է դասել Ռոլֆ Է. Քուրի, Ջոն ԴեՆոնոյի, Ռոբերտ Դենիելի, Ջոզեֆ Գրաբիլի աշխատությունները²:

Խորհրդային Միությունում, ուր ԱՄՆ-ի հետ կապված պատմական գանկացած փաստ պատմական հետահայաց վերանայման էր ենթարկվում, ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության հարաբերությունների, ինչպես նաև ամերիկյան միսիոններների մասին եղել են հատուկեցտ աշխատություններ և հոդվածներ, որոնք թեև հաճախ փաստերը միակողմանի էին մեկնաբանում, այնուամենայնիվ պարունակում էին հետաքրքրական փաստեր ու դիտարկումներ³:

¹ Harry N. Howard, The Partition of Turkey: A Diplomatic History, 1913-1923, Norman: University of Oklahoma Press, 1931; L. J. Gordon, American Relations with Turkey: An Economic Interpretation, 1830-1930, Philadelphia, 1932.

² R. E. Cook, The United States and the Armenian Question, 1894-1924, PhD Diss., Fletcher School of Law and Diplomacy, 1957; J. DeNovo, American Interests and Politics in the Middle East, 1900-1939, Minneapolis, 1963; Robert Daniel, American Philanthropy in the Near East, 1820-1930, Athens, Oh.: Ohio University Press, 1970; Joseph L. Grabill, Protestant Diplomacy and the Near East: Missionary Influence on American Policy, 1810-1927, Minneapolis: University of Minnesota Press, 1971.

³ И. В. Шнилькова, Импералистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.), Москва, Политиздат, 1960; Киреев Н. Г., Начало проникновения американского империализма на Ближний

Խորհրդային և հետխորհրդային հայ պատմագրությունում ատենախոսության թեմային առնչվող որոշակի արժեքավոր տեղեկություններ կան Ս. Հակոբյանի, Ե. Սարգսյանի, Ա. Կիրակոսյանի, Գ. Մախմուրյանի, Բ. Ավագյանի, Ե. Գասպարյանի և այլոց աշխատություններում⁴։

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ քանակական առումով խորհրդային և հայաստանյան պատմագրությունը ուղղակիորեն նյութին առնչվող սահմանափակ քանակի հետազոտություններ է տվել՝ միանգամայն բացատրելի պատճառներով։ Հայոց գեղասպանության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության և մարդասիրական արձագանքի մասին թեման վերստին արդիական դարձավ վերջին երկու տասնամյակներում՝ արդեն շնորհիվ սիյուրքահայ պատմաբանների, ինչպես օրինակ՝ Ռիչարդ Տ. Քոլմանի, Արա Սարաֆյանի, և այլոց, որոնք առաջին հերթին մանրակրկիտ կումպիլիցիոն աշխատանքներ էին կատարել ամերիկյան արխիվներում՝ դիվանագիտական վավերագրերի, օրագրերի, միսիոներական հաշվետվություն-զեկույցների և մամուլի նյութերի հայտնաբերման և հրատարակման համար⁵։

Վերջին ժամանակներս Արա Սարաֆյանի, Հիլմար Կայգերի և այլոց ջանքերով հրատարակվում և վերահրատարակվում են Հայոց գեղասպանության ականատես կամ իրադարձություններին մոտիկից հետևած ամերիկյան դիվանագետների, միսիոներների, օրագրեր, նամակների և անձնական արխիվների մաս կազմող փաստաթղթեր, որոնք էականապես լրացնում են ոչ միայն այս թեմային առնչվող տեղեկություններում բացը, այլև Հայոց գեղասպանության ուսումնասիրման նոր՝ դեռևս լավ չյուրացված միկրոպատմական ասպարեզի դուռն են լայնորեն բացում⁶։

Восток, в св. *Внешнеэкономические связи Османской империи в новое время (конец XVIII - XX в.)*, отв. ред. Ю. Петросян, Москва: «Наука», 1989, стр. 155-168.

⁴ Տ. Մ. Акопян, Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967; Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, Изд. АН Арм. ССР, 1972; Арман Киракосян, Великобритания и Армянский вопрос, 90-е годы XIX века, Ереван, Айастан, 1990; Գ. Махмурия, Вопросы новой истории Армении в современной историографии США, в св. *Новая история Армении в трудах современных зарубежных авторов*, отв. ред. Саакян Р. Г., Ереван: изд-во НАН Армении, 1993; Բնարիկ Ավագյան, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ զառույթի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000; Երվանդ Գասպարյան, Ֆրանսիան և Մեծ Եղեռնը (1915-1918թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2000:

⁵ Leslie Davis, *The Slaughterhouse Province. An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, ed. Susan K. Blair, New Rochelle, N.Y.: A. Katardzas Publ., 1989; Richard D. Kioian, *The Armenian Genocide: News Accounts from the American Press (1915-1922)*, Berkeley 1985; United States Official Documents on the Armenian Genocide, Vol. I: The Lower Euphrates, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1993; United States Official Documents on the Armenian Genocide, Vol. II: The Peripheries, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1994; United States Official Documents on the Armenian Genocide, Vol. III: The Central Lands, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1995; United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafian, Reading, UK: Taderon Press, 2004.

⁶ Henry H. Riggs, *Days of Tragedy in Armenia, Personal Experiences in Harpoot, 1915-1917*, Gomidas Institute, Ann Arbor, Mich.: 1997; Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, Reading: Taderon Press, 2000; Abram Elkus, *The Memoirs of Abram Elkus: Lawyer, Ambassador, Statesman, with a critical commentary by Hilmar Kaiser*, Reading (UK): Taderon Press, 2004; United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau 1913-1916, Princeton and London: Gomidas Institute, 2004; Hilmar Kaiser, ed., *Marsovan 1915: The Diaries of Bertha B. Morley*, 2nd ed., Gomidas Institute, Ann Arbor, Mich., published by: Taderon Press: Reading, UK, 2000.

Արա Սարաֆյանը նաև կատարել է աղբյուրագիտական աշխատանքների եզակի վերլուծություն՝ համեմատելով փաստաթղթերի մի քանի ժողովածուների աղբյուրներում հավաքված ամերիկյան նյութերի ծագումնաբանությունը, և ուսումնասիրվող ժողովածուներում դրանց հայտնվելու պատմությունը⁷ :

Այս պատկանելի աղբյուրագիտական հենքի վրա էլ ներկայումս ԱՄՆ-ում և այլուր շարունակում է զարգանալ Հայոց ցեղասպանությանը ամերիկյան արձագանքի մասին վերլուծական գրականությունը:

Այս առումով ներկայումս կենտրոնական նշանակություն ունի Սիմոն Փայասլյանի աշխատությունը ԱՄՆ-ի և Հայկական հարցի մասին, որի ժամանակային ընդգրկումն է 1890-ականներից մինչև 1920-ականների սկիզբը: Ամերիկյան արխիվային նյութերի վրա հիմնված Ս. Փայասլյանի աշխատությունում հանգամանալիորեն ներկայացվում է ամերիկյան քաղաքականությունը տարածաշրջանում, Օսմանյան կայսրությունում և հայերի նկատմամբ⁸ :

Վերջին մի քանի տասնամյակում «ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության տարիներին» թեման լուսաբանող մեծագրություններ և հոդվածներ են տպվել հիմնականում ԱՄՆ-ում՝ Դ. Փափազյանի, Փ. Բալաքյանի, Ջ. Մ. Բուփերի, Հանս-Լուկաս Բիզերի և այլոց հեղինակությամբ⁹ :

Սույն առեւտրային թեմայի որոշ հանգամանքներ լուսաբանող հետազոտություններ կան Մերձավոր Արևելքում ամերիկյան միսիոներների պատմությունն ուսումնասիրող աշխատություններում¹⁰ :

Նկատի ունենալով ամերիկյան միսիոներների և արևմտահայերի առնչությունների նկատմամբ թուրքական պատմագրության վերջերս աճած հետաքրքրությունը և դրանցում որոշ մտացածին և քննադատելի դրույթների ներկայացման անհրաժեշտությունը՝ ատենախոսությունում օգտվել ենք մի քանի թուրքական հեղինակների՝ Օսմանյան կայսրությունում ամերիկյան միսիոներների գործունեությանը նվիրված ուսումնասիրություններից¹¹ :

⁷ Sarafian A., The Paper Trail, the American State Department and the Report of Committee on Armenian Atrocities, in *Revue du monde arménien moderne et contemporaine*, tome 1, Paris, 1994; A. Sarafian, The Archival Trail: Authentication of The Treatment of Armenians in the Ottoman Empire, in *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*, Richard G. Hovannisian, ed., Dertoit, Mich.: Wayne State University Press, 1998.

⁸ S. Payaslian, Unites States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide, New York: Palgrave Macmillan, 2005.

⁹ Dennis R. Papazian, Changing American View of the Armenian Question: An Interpretation, in *Armenian Review*, Winter 1986, No. 4-156, pp. 42-47. John Milton Cooper, Jr., A Friend in Power? Woodrow Wilson and Armenia, in *America and the Armenian Genocide of 1915*, Jay Winter, ed., Cambridge: Cambridge University Press, 2003; Peter Balakian, From Ezra Pound to Theodore Roosevelt: American Intellectual and Cultural Responses to the Armenian Genocide, in *America and the Armenian Genocide*, ed. by Jay Winter, Cambridge: Cambridge University Press, 2003; Hans-Lukas Kieser, Nearest East: American Milleniarism and Mission to the Middle East, Philadelphia: Temple University Press, 2010.

¹⁰ Suzanne Elisabeth Moranian, The American missionaries and the Armenian question, 1915-1917, Ph.D. Dissertation, The University of Wisconsin, Madison, 1994; R. Blincoe, Ethnic realities and the church: lessons from Kurdistan. A history of mission work, 1668-1990. Pasadena: Presbyterian Center for Mission Studies, 1998; D. Bosch, Transforming Missions, New York: Orbis Books, 2003; Pieter Pikkert, Protestant Missionaries in the Middle East, PhD Dissertation, University of South Africa, 2006.

¹¹ İber Ortaylı, Soykırım doğasının arkasındaki gerçekler, 90. Yılında Ermeni Trajedisi: 1915'te ne oldu? Sefa Kaplan, ed., İstanbul: Doğan kitapçılık AŞ, 2005; Şahin Gürsoy, Türk-Ermeni ilişkilerinin bozulmasında Amerikalı misyonerin rolleri üzerine bir inceleme (A Study About the Roles of American Missionaries on Deteriorating Relation Between Turks and Armenians), Sosyal Bilimler Dergisi ; Alan Gülbadi, Protestan

վերջերս Հայոց ցեղասպանության նկատմամբ ամերիկյան պաշտոնական արձագանքի և ցեղասպանությանը հաջորդող տարիներին հայ վերապրողներին տրամադրված ամերիկյան մարդասիրական օգնության մասին բազմազան գրականություն է տպագրվում արտերկրում, ինչը թարմացնում է մինչ այդ եղածը¹²:

ԱՏԵՆ ԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԵՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջաբանում ներկայացված են աշխատանքի հիմնադրույթները, արդիականությունը, գիտական նորույթը, ժամանակագրական ընդգրկումը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանությունը, տեսական ու գործնական նշանակությունը, թեմայի շուրջ եղած գրականության տեսությունը և այլ մանրամասներ:

Առաջին գլուխը՝ «ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԸ ԵՎ ԱՄՆ-Ի ՇԱՀԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ՐԴ Դ. ՎԵՐՁԻՆ – 20-ՐԴ Դ. ՍԿԶԲԻՆ» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Արևմտահայերը և ամերիկյան միսիոներները գործունեությունը Օսմանյան կայսրությունում», նկարագրվում է ամերիկյան միսիոներներին՝ 19-րդ դարից սկսած ներթափանցումը Օսմանյան կայսրության հայաշատ վայրեր, նրանց ծավալած գործունեությունը արևմտահայերի շրջանում, այդ գործունեության շեշտադրումներին՝ մասնավորապես կրթա-մշակութային և կրոնա-քարոզչական ոլորտներում: Հատուկ անդրադարձ է արվում ամերիկյան կրթական հաստատությունների դերին ու նշանակությանը ինչպես արևմտահայության համար, այնպես էլ ամերիկյան կրթական հաստատությունների կարևորությամբ՝ Օտարերկրյա Առաքելությունների Լիագրուների Ամերիկյան Խորհրդի գործունեությունում և այդ հաստատություններում հայերի խաղաղած դերին:

Ենթագլխում կարևորվել է ամերիկյան միսիոներներին՝ հայերին քարոզվող արժեքավարձի վերլուծությունը, դիրտարկումներ են արվել դրանց իրատեսության առումով, կատարվել է այդ առումով այլ վերլուծությունների համադրում:

Ենթագլուխը նաև անդրադառնում է ամերիկյան միսիոներների գործունեության հետևանքներին արևմտահայության շրջանում, նշվում է, որ նրանց առնչությունը հայ ազատագրական շարժմանը եղել է ակամա, թեև որոշակիորեն օբյեկտիվ՝ քանզի նրանց մատուցած կրթությունը հիմնված էր ազատական և արդիական իդեալների վրա: Այս առումով քննական և քննադատական վերլուծության են ենթարկվում խորհրդային շրջանի որոշ, ինչպես նաև թուրքական պաշտոնական պատմագրության մի շարք մասնագետներ, որոնք միսիոներների գործունեության արդյունքը չափազանցված գույնեղով են ներկայացնում:

Amerikan misyonerleri, Anadolu'daki Rumlar ve Pontus meselesi, Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, Sayı: 10, Yıl: 2001.

¹² Merrill D. Peterson, «Starving Armenians»: America and the Armenian Genocide, 1915-1930 and after, Charlottesville and London: University of Virginia Press, 2004; H. Kaiser, At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917, Reading, UK: Taderon Press, 2001; Rouben P. Adalian, American Diplomatic Correspondence in the Age of Mass Murder: The Armenian Genocide in the U.S. Archives, in *America and the Armenian Genocide of 1915*, Jay Winter, ed., Cambridge: Cambridge University Press, 2003; Lloyd E. Ambrosius, Woodrow Wilson and The Birth of a Nation: American Democracy and International Relations, in *Diplomacy and Statecraft*, No. 18, Routledge, 2007.

Ենթադրյալում նաև հպանցիկ անդրադարձ կա միսիոներների գործունեության մեկ այլ արդյունքին՝ դեպի ԱՄՆ արտագաղթին, որի մեջ անհամաչափորեն շատ էր բողոքական հայերի մասնաբաժինը:

Երկրորդ ենթազյուսում՝ «ԱՄՆ-ի տնտեսական և աշխարհաքաղաքական շահերն Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարտի նախօրեին», ներկայացվում է մինչև 1914թ. ԱՄՆ-ի արևմտա-տնտեսական և աշխարհաքաղաքական հետաքրքրություններին Օսմանյան կայսրությունում, այդ թվում և ամերիկյան ներդրումային ծրագրերը տարածաշրջանում, համառոտ ներկայացվում է տարածաշրջանում ամերիկյան աշխարհաքաղաքականության գաղափարական հենքը:

19-րդ դարում՝ 1829 և 1862 թվականներին ԱՄՆ-ը պայմանագրեր կնքեց Օսմանյան կայսրության հետ, որոնցով ապահովեց տնտեսական, ինչպես նաև իրավական ոլորտում որոշակի առանձնաշնորհներ (կապիտուլյացիաներ) և այդ երկրում գործունեության քիչ թե շատ ազատ դաշտ: 1909թ. ԱՄՆ-ի Պետքարտուղարության ակտիվ մասնակցությամբ կնքվեց համաձայնագիր, որով ամերիկյան «Չեստերի լուսմբն» իրավունք էր ստանում կառուցել երկաթուղային ցանց Օսմանյան կայսրության կենտրոնական և արևելյան նահանգներում, ինչպես նաև 99 տարով շահագործելու նավթահորեր և այլ բնական հարստություններ նշված շրջաններում¹³: Այս ծրագրերը, սակայն խափանվեցին եվրոպական տերությունների, առաջին հերթին՝ Գերմանիայի ճնշման ներքո, որոնց շահերին ամերիկյան ծրագրերի իրականացումը կվնասեր:

Մյուս կողմից նշվում է, որ ամերիկյան ներդրումները, ինչպես նաև ամերիկա-թուրքական առևտուրը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին դեռևս նշանակալից չէին, թեև դիսամիկ զարգացման մեջ էին:

Ենթազյուսում նաև համառոտ քննարկվում է ԱՄՆ-ի՝ իբրև աշխարհում բացառիկ դեր ունեցող երկրի և մարդկությունը դեպի առաջընթաց առաջնորդելու նախասահմանվածության համոզման վրա հիմնված քաղաքական գաղափարախոսությունը, ներկայացվում է քաղաքական այդ մեխանիզմների և առջնությունը ԱՄՆ-ի՝ մասնավորապես Մերձավոր Արևելքում ունեցած դերի և վարած քաղաքականության հետ:

ԱՄՆ-ը Օսմանյան կայսրության հետ իր հարաբերություններում զուգաբերել է զգուշավորություն՝ զերծ մնալով եվրոպական մեծ տերությունների կողմից շահարկվող Հայկական հարցում ակտիվություն ցուցաբերելուց, ինչով խուսափել է թե՛ օսմանյան իշխանությունների հնարավոր բացասական հակազդեցությունից, և թե՛ եվրոպական դիվանագիտական ինտրիգների մեջ ներթաշվելու (ինչին ԱՄՆ-ն ուսումնասիրվող ժամանակահատվածում անպատրաստ էր) հավանականությունից:

Չորրորդ ենթազյուսում՝ «ԱՄՆ-ի քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ Առաջին աշխարհամարտի տարիներին և Հայկական հարցը» ներկայացվում է Առաջին համաշխարհային պատերազմը ծագելուց և նրանում Օսմանյան կայսրության ներգրավումից ի վեր թուրք-ամերիկյան հարաբերությունների դիսամիկան, նրանցում որոշ խնդրահարույց պահերը (բացի Հայկական հարցից) որոնք ծագեցին կապիտուլյացիաների վերացումից և օսմանյան ջրերում ամերիկյան ռազմածովային ներկայությունից:

Օսմանյան իշխանությունները, օգտվելով պատերազմի պատեհությունից, փորձեցին սահմանափակել օտարերկրյա հաստատությունների գործունեությունը իրենց երկրում, ինչին ամերիկյան դիվանագիտությունն արձագանքեց խորը վրդովմունքով: Օսմանյան

¹³ И. В. Шилькова, Империалистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.), Москва, Политиздат, 1960, стр. 35-36, տես նաև Аюбян, стр. 136.

ղեկավարները փորձեցին որոշակիորեն մեղմել ամերիկացիներին գայրույթը, այնուամենայնիվ քաղաքական այդ ընթացքը քիչ բանով փոխվեց:

Ենթագլխում նաև ուրվագծվում են ամերիկյան շահերն ու հետաքրքրությունները տարածաշրջանում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որոնք առնչվեցին հայերի կոտորածներին և տեղահանությանը: Ենթագլխում կատարվում են ընդհանրացումներ՝ մինչև Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության նկատմամբ ամերիկյան քաղաքականության և հայության շահերից տեսակետից գնահատականներով:

Երկրորդ գլուխը՝ «ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄԸ ԱՄՆ, ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԵՎ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ամերիկյան աղքատների կողմից Հայոց ցեղասպանության մասին տեղեկագրումը» ներկայացվում են ամերիկյան միսիոներների, հյուպատոսների և դեսպանների վկայությունները Հայոց ցեղասպանության մասին, դրանց փոխանցման ձևն ու բովանդակային վերլուծությունը:

Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների և տեղահանումների մասին տեղեկատվությունը վտանգ էր օսմանյան իշխանություններին և հետևաբար՝ նրանք ամեն կերպ խոչընդոտում էին դրանց մասին տեղեկատվության փոխանցումը արտաքին աշխարհ՝ խոչընդոտելով նաև ամերիկյան միսիոներների և հյուպատոսների թղթակցությունը:

Միսիոներների նամակագրությունում կան վկայություններ հայերի դեմ վերահաս ցեղասպանական գործողությունների մասին թուրք անձնավորությունների հաղորդած տեղեկությունների, ինչպես նաև բուն ցեղասպանության ժամանակ տարբեր պաշտոնյաների վարքագծի, նրանց հայտարարությունների, ներկայացրած աշխարհայացքի մասին: Նրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ Վանի վայրի շրջանում իր դատանություններով հայտնի Ջևդեթը, անձամբ են խոստովանել և մինչև իսկ հպարտացել իրենց դատանությամբ¹⁴:

Ամերիկյան միսիոներները որոշ դեպքերում ականտես էին լինում հայերի նկատմամբ դատան վերաբերմունքի՝ ինչպես հիվանդներին օգնություն չհասցնելը¹⁵, մինչև իսկ եղել են սպանության դեպքերի ակնատեսներ¹⁶: Միսիոներների վկայություններում կան ինչպես իրենց դատանությամբ աչքի ընկած որոշ թուրք պաշտոնյաներ, այնպես էլ (հիմնականում անանուն ներկայացված) գթասիրտ թուրքեր՝ ինչպես պաշտոնյա, այնպես էլ հասարակ, ովքեր որոշակիորեն օժանդակել են հայերին՝ փրկվելու¹⁷:

Օսմանյան կայսրությունում պաշտոնավարող ամերիկյան հյուպատոսներից մի քանիսը, դեռ տեղահանությունների նախօրեին վկայում էին որոշ վայրերում թուրքական

¹⁴ Clarence D. Ussher, M.D., Grace H. Knapp, An American Physician in Turkey: A Narrative of Adventures in Peace and in War, Boston & New York, 1917 (November), pp. 237-338.

¹⁵ Rafael de Nogales, Four Years Beneath the Crescent, London: Sterndale Classics, 2003, p. 91.

¹⁶ Statement of Observations While in Bitlis and On the Road Between Bitlis and Harput – May 1915 to December 1915 [by Myrtle O. Shane], in "Turkish Atrocities": Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, compiled by James L. Barton, Gomidas Institute: Ann Arbor, Mich., 1998, p. 10.

¹⁷ The United States Inquiry and the Armenian Question, 1917-1919: The Archival Papers, Appendix: Inquiry document No. 810, Atrocities, Turkish, Statement by Tacy W. Atkinson, Armenian Review Special Issue, Spring 1984, Vol. 37, No. 1-145, Boston, Mass. p. 180.

շովինիզմի դրսևորումների և տեղահանության իրական նպատակների մասին իրենց հիմնավոր կասկածներն էին արտահայտում¹⁸։

Նրանցից մի քանիսը, մասնավորապես Սարբերդում պաշտոնավորող ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դևիսը այդ նահանգում տեղահանության նախօրեին արդեն կանխագույժ էր վերահաս իրադարձության նշանակությունը և մեխանիզմները¹⁹։

Տրապիզոնում տեղակայված հյուպատոս Հայկերը ակնատես է եղել Տրապիզոնում հայ տղամարդկանց ծոփում հեղձամահ անելու որոշ դրվագների, ինչպես նաև վկայում է այդ գործողություններում տեղի իթթիհադական պարագլուխ Նայիլ բեյի կարևորագույն դերի մասին²⁰։

Որոշ հյուպատոսներ, ինչպես Լեսլի Դևիսը Սարբերդում, անձամբ են եղել գանգվածային սպանությունների վայրերում՝ տեսնելով բազմաթիվ դիակներ և սպանությունների հետքերի²¹, իսկ օրինակ Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջեսսի Ջեքսոնը Կ. Պոլսի դեսպանությանն ու Պետքարտուղարությանն էր փոխանցել 1916թ. օգոստոսից ի վեր Դեյր էզ Ջորի շրջակայքում տեղի ունեցած արյունալի կոտորածների մասին հյուպատոսական գործակալ Աուգուստ Բեռնաուի զեկուցագրերը²²։

Տեղեկատվության փոխանցման խոչընդոտների պայմաններում ամերիկյան դեսպանները ոչ միշտ են արագորեն տեղյակ եղել ներքին նահանգներում ծավալվող իրադարձություններին, սակայն հայերի դեմ ցեղասպանական գործողությունների սաստկացմանը զուգահեռ, տեղեկատվական ակտիվ հոսքի պայմաններում խոչընդոտները որոշակիորեն չնգործացվել են։

1915թ. հուլիսից սկսած Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի զեկուցագրերը պարունակում են ժամանակակից «ցեղասպանություն» եզրույթը բնորոշող բազմաթիվ բնութագրիչներ, ինչպես՝ «միտումնավոր գործողություններ», «ազգի ոչնչացում», «ազգի ոչնչացմանն ուղղված արշավ», «հայ ազգի կործանում»²³։ Մորգենթաուի և դեսպանության ղեկավարի պաշտոնում նրան հաջորդողների զեկուցագրերում երևում է, որ նրանք հասկացել էին ցեղասպանության և պատերազմի միջև պատճառական կապի բացակայության մասին, մի բան, որն օրինակ ԱՄՆ-ի պետքարտուղարը կամ չէր հասկացել, կամ գերադասել էր չհասկանալ։

Երկրորդ ենթագլխում՝ «ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը և դիվանագետների միջամտությունները» ներկայացվում են Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանության ղեկավարների կողմից ԱՄՆ-ի Պետքարտուղարությանն ուղղված քաղաքական առաջարկները, և արևմտահայության օգտին անձնական միջամտությունները։ Ենթագլուխը նաև անդրադառնում է նաև ԱՄՆ-ի Պետքարտուղարության և անձամբ պետքարտուղարի դիրքորոշումներին Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածի ու տարագրության նկատմամբ, այդ դիրքորոշման կայացման մեջ Գերմանիայի համապատասխան դիրքորոշման դերի, ինչպես նաև Օսմանյան կայսրության տարբեր հատվածներում

¹⁸ G. Horton to Secretary of State, 4 February, 1915, U.S. NA RG 59 867.00/739; O. Heizer to H. Morgenthau U.S. NA RG 59 867.4016/105.

¹⁹ Leslie A. Davis to H. Morgenthau, U.S. NA RG 59, 867.4016/269.

²⁰ Oscar Heizer to H. Morgenthau, U.S. NA RG 59 867.4016/114.

²¹ Leslie Davis, *The Slaughterhouse Province. An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, ed. Susan K. Blair, New Rochelle, N.Y.: A. Katardzas Publ., 1989, p. 83.

²² Rössler an den Reichskanzler, 20. September, 1916, *Wolfgang Gust (Hg.), Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts*, Springe: Zu Klampen Verlag, 2005, 1916-09-20-DE-001, SS. 509-514; Hoffmann an die Botschaft in Konstantinopel, 5. September, 1916, 1916-09-05-DE-001, SS. 486-487; U.S. NA RG 59 867.4016/373 March 4, 1918.

²³ U.S. NA RG 59,867.4016/76, /117, /159.

ամերիկյան հյուպատոսներին և միսիոներներին միջամտություններին՝ տարագրյալներին որոշ հատվածներ կենդանի պահելու և նրանց նկատմամբ վարվող անմարդկային քաղաքականությունը ինչ-որ չափով մեղմելու համար:

Կ. Պոլսում ամերիկյան դեսպանությունում արագ հասկացան, որ գործադրվող ցեղասպանական քաղաքականությունը սպառնում էր նաև ամերիկյան շահերին, սակայն նրանց ընտրության հնարավորությունները սահմանափակ էին: Հ. Մորգենթաուն, ինչպես նաև նրա հաջորդները քննարկել են հարաբերությունները խզելու սպառնալիքի տարբերակը՝ իբրև ներագոյելու միջոց, սակայն հրաժարվել են դրանից: Ուժի գործադրումը Հ. Մորգենթաունը համարել է անհանարին, փոխարենը ջանքերը կենտրոնացվել են հասարակական կարծիքի բացասական արձագանքի վրա հիմնված ճնշումները, և այս հարցում կարևորվել է Գերմանիայի դիրքորոշումը:

Գերմանիայի դիրքորոշումը իբրև օսմանյան իշխանությունների վրա ներագոյելու կարևորագույն լծակ են ընկալել ամերիկյան դիվանագիտության տարբեր ներկայացուցիչներ: Գեսպան Մորգենթաունը դեռ Կ. Պոլսում փորձել է հայկական խնդրի վրա հրավիրել Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմի, ապա նրան փոխարինող իշխան Հոենլոնի ուղարկությունը: Սակայն Պետքարտուղարությունում ակնկալում էին տեսնել Գերմանիայի կողմից իրական ազդեցություն՝ միաժամանակ պետքարտուղարի մակարդակով անվստահություն հայտնելով միջամտելու՝ ԱՄՆ-ի իրավունքի առիթով²⁴:

Այնուամենայնիվ Գերմանիայի վրա այս հարցում բանեցվում էր որոշակի ճնշում, մասնավորապես սպառնում էին «բացահայտել սահմնեցուցիչ փաստեր», ինչի դիմաց գերմանական դիվանագիտությունը փորձում էր արդարանալ²⁵:

Օսմանյան կայսրության տարբեր նահանգներում պաշտոնավարող ամերիկյան դիվանագետներն ու միսիոներները ևս փորձում էին իրենց գտնված վայրերում ինչ-որ բան անել տարագրությունից ոմանց փրկելու կամ տարագրվածների որևէ կերպ օժանդակելու համար:

Ամերիկյան միսիոներները տեղերում փորձել են տարագրված հայերին օգնություն ցուցաբերելու հնարավորություն ստանալ, իսկ որոշ դեպքերում էլ՝ ինչպես Նարբեքում օգնել են փախստական հայերին խուսափել տարագրումից և ապահով անցնել ռուսական իշխանությունների հսկողության ներքո գտնվող տարածքներ²⁶: Այնուամենայնիվ, ինչպես երևում է նաև ամերիկյան հյուպատոսների զեկուցագրերից, նրանք իսկապես շատ բան անել չէին կարող՝ կաշկանդված լինելով իրենց գործողություններում և միջամտության խնդիրներում հանդիպելով տեղական իշխանությունների համառ դիմադրությանը:

Երրորդ ենթագլխում՝ «Հայերի կոտորածների և տեղահանության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքական դիրքորոշման ձևավորումը» ներկայացվում է հիմնականում ԱՄՆ-ի Պետքարտուղարության արձագանքը հայերի կոտորածներին և տեղահանումներին, վերլուծվում է դրա տրամաբանությունը, ներկայացվում են նաև ԱՄՆ-ի քաղաքական արձագանքն ուղղորդելու կամ փոփոխելու միտումով արված դիմում-հորդորներն առ ԱՄՆ-ի ղեկավարությունը՝ ինչպես հայկական և հայասիրական, այնպես էլ բարի կամքի տեր այլ անձնավորություններից և կազմակերպություններից: *Ենթագլխում* քննարկվում է նաև 1917թ. ապրիլի 17-ին ԱՄՆ-ի՝ Առաջին համաշխարհային պատերազմ մտնելուց

²⁴ United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafian, Reading, UK: Taderon Press, 2004, p. 80.

²⁵ Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War, Washington, 1928, pp. 989-990.

²⁶ “Turkish Atrocities,” Statements of the American Missionaries on the Destruction of the Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, compiled by James Barton, Ann Arbor: Gomidas Institute, 1998, p. 47.

հետո այդ երկրի կողմից Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու հարցը՝ Հայոց ցեղասպանությունը վերապրողներին օգնություն տրամադրելու և ամերիկյան շահերի տեսանկյունից:

ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը դեռ 1915թ. փետրվարին պետքարտուղար Վիլիամ Ջ. Բրայընի օրոք, երբ ցեղասպանական գործողությունները չէին սկսվել, սպառնում էր օսմանյան իշխանություններին անձանական պատասխանատվությամբ «հրեաների և քրիստոնյաների» կյանքի և գույքի նկատմամբ ոտնձգությունների դեպքում²⁷:

Պաշտոնում Բրայընին փոխարինած Ռոբերտ Լանսինգը իր հայացքներում համոզված լեզալիստ էր, ում համար ժողովուրդների իրավունքները ստորադաս էին պետությունների ինքնիշխանության նկատմամբ²⁸:

Պետքարտուղարը մի քանի անգամ արտահայտվել է «հայերի կողմից իշխանությունների դեմ գինված ապստամբության» դրույթը, ինչը չի հաստատվում ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերով իսկ²⁹:

Մեկ այլ դեպքում՝ արդեն 1916թ. նոյեմբերին, ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը նախագահ Վուդրո Վիլսոնին ուղղված անձնական մի նամակում շարադրում էր իր տեսանկյունը՝ հայերի տեղահանությունը կարելի էր արդարացնել, բայց դատապարտելի էր դրա իրականացման ձևը և դրանց ուղեկցած դաժանությունները: Այսուհանդերձ, Լանսինգը կասկածի տակ չի առել օսմանյան կռավարության կողմից՝ հայերին ոչնչացնելու մտադրության գոյությունը:

Հայոց ցեղասպանության նկատմամբ ԱՄՆ-ի արձագանքում կարևոր լեյտմոտիվ էր հասարակական կարծիքի բացական տրամադրությունն իբրև լծակ վկայակոչելու գործելակերպը, որը կրկնվում էր 1915թ. հոկտեմբերի 4-ի, 1916թ. փետրվարի 4-ի և 12-ի բողոք-հայտագրերում, որում նշվում էր, որնոցում ԱՄՆ-ը սպառնում էր բացահայտել «ողջ ճշմարտությունը» հայերի տեղահանման և կոտորածների մասին:

Ենթազվյալում նաև քննարկվում է ԱՄՆ-ի կողմից մարդասիրական միջամտության տեսական հնավանականությունը՝ ելնելով մինչ այդ եղած ԱՄՆ-ի փորձից (ինչպես օրինակ Կուբայում գինված միջամտությունը), ինչպես նաև այդ հարցի շուրջ այն ժամանակվա և ժամանակակից տեսաբանների դիտարկումները³⁰:

Ենթազվյալում անդրադառնում է նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Վ. Վիլսոնին և ԱՄՆ-ի Պետքարտուղարությանն ուղղված դիմում-հորդորները՝ հայերի օգտին միջամտելու և կենդանի մնացածների կյանքը փրկելու նույնպես խնդրանքներով:

Այս հարցում ակտիվ էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Զալեն Տեր-Շողիայեանը, Ամերիկայի Հայոց թեմի առաջնորդ Արսեն արք. Վեհուհին, ով 1916թ. դեկտեմբերի 14-ին տեսակցություն ունեցավ Վ. Վիլսոնի հետ:

ԱՄՆ-ի իշխանություններին արևմտահայերի օրհասական վիճակի մասին ահագանգելու և այդ հարցում միջամտելու հարց բարձրացնողներին ԱՄՆ-ում ակտիվ էին

²⁷ U.S. NA RG 59/367.116/309a Secretary of State to H. Morgenthau, Feb. 18, 1915, տես նաև՝ Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, The World War, Washington, 1928, p. 979.

²⁸ S. Payaslian, Unites States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide, New York: Palgrave Macmillan, 2005, pp. 74-75.

²⁹ Papers Relating ... , 1914, pp. 984-985; The Papers of Woodrow Wilson, Arthur S. Link, ed., vol. 40, November 20, 1916 – January 23, 1917, Princeton, N. J.: Princeton University Press, 1982, p. 25.

³⁰ Malbone W. Graham, Humanitarian Intervention in International Law as Related to the Practice of the United States in Michigan Law Review, Vol.22, No.4 (Feb.,1924), pp. 322-323, footnote 46, pp. 323-324, footnote 49, p. 326; Samantha Power, “A Problem from Hell”: America and the Age of Genocide, New York: Basic Books, 2002, pp. 13-14.

ամերիկահայ գործիչներ Միլիթան Սվազլին, Սմբատ Գաբրիելը ու Վահան Բարտաշյանը, Նյու Յորքում երկար տարիներ Պարսկաստանի գլխավոր հյուպատոս ծառայած Հայկազուն Թոփակյանը և ուրիշներ:

ԱՄՆ-ի նախագահին համանման խնդրանքներով էին դիմում այլ օտարազգի գործիչներ, ինչպես Վիկտոր Բերարը Ֆրանսիայից, Մարդու Իրավունքների Լիգայի նախագահ Ֆերդինան Բյուխսոնը, կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ Օտարերկրյա Առաքելությունների Ամերիկյան Խորհուրդը, Կալիֆոռնիայում և Նևադայում պրեսբիտերական եկեղեցու՝ շուրջ 50,000 անդամ ունեցող Կալիֆոռնիայի սինոդը:

Հայերի դեմ կազմակերպված կոտորածները դատապարտող զանգվածային միջոցառումների անցկացումը ևս եղել է ամերիկյան մի շարք քաղաքների իշխանությունների ուշադրության կենտրոնում:

Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության դեմ ռազմական միջամտության հարցը ԱՄՆ-ում լրջորեն քննարկել է ռազմական գերատեսչությունը, ինչը հավանության է արժանացել ԱՄՆ-ի նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտի և Վ. Բարտաշյանի կողմից³¹:

Վ. Վիլսոնի՝ 1917թ դեկտեմբերի 4-ին կոնգրեսին ուղղված որոշումներից մեկը պարունակել է Գերմանիայի դաշնակիցներին՝ այդ թվում և Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու առաջարկ³², ինչը սակայն չեզոքացվել է միսիոներական լոբբիի, ինչպես նաև ԱՄՆ-ի նախկին դեսպաններ Հ. Մորգենթաուի և Ա. Էլկուսի ջանքերով³³:

ԱՄՆ-ի պետքարտուղար Լանսինգը պատերազմ հայտարարելու հարցում կայուն դիրքորոշում չի դրսևորել. մեկ կողմ է եղել՝ այդ հարցում իր դիրքորոշումը ներկայացնելով նախագահ Վիլսոնին³⁴, մեկ դեմ՝ դա բացատրելով տեղում եղած քրիստոնյաների և հրեաների անվտանգության մտահոգություններով³⁵:

Պատմական հետավորությունից կարելի է արձանագրել, որ ամերիկյան զինված միջամտությունը հազիվ թե հնարավոր լիներ, իսկ հնարավորության դեպքում էլ՝ կասկածելի հաջողությամբ, մինչդեռ 1917թ. Օսմանյան կայսրությունը հասել էր իր հիմնական նպատակին՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայաթափմանը ու հայերի հիմնական մասի ֆիզիկական ոչնչացմանը:

Երրորդ գլուխը՝ «ԱՄՆ-ի ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅՈՅ ԶԵՆԱՊԱՆ ՈՒԹՅԱՆԸ» բաղկացած է չորս ենթագլխից:

Գլխի սկզբում, իբրև ընդհանուր տեղեկություն, ներկայացվում է տեղեկատվական այն խորապատկերը, որի վրա ամերիկյան հասարակությունը 1915-1917թթ. ստացել է հայերի տեղահանությունների և կոտորածների մասին լուրերը, ինչպես նաև անդրադարձ կա Առաջին շխարհամարտում հակամարտող կողմերի հանդեպ ԱՄՆ-ի մամուլի և շահագրգիռ խմբերի վերաբերմունքին:

Առաջին ենթագլուխը՝ «Ամերիկյան մամուլի արձագանքը Հայոց ցեղասպանությանը» անդրադառնում է մեզ հետաքրքրող ժամանակահատվածում ամերիկյան ամենատարբեր՝ ինչպես հեղինակավոր («Նյու Յորք թայմս», «Չիկագո դեյլի

³¹ Mark Malkasian, *The Disintegration of the Armenian Cause in the United States, 1918-1927* in *International Journal of Middle East Studies*, Vol. 16, No. 3 (Aug., 1984), pp. 352-353.

³² Victor S. Mamatey, *The United States and Bulgaria in World War I* in *American Slavic and East European Review*, Vol. 12, No. 2 (Apr., 1953), p. 236, footnote 11.

³³ Նույն տեղում, p. 236.

³⁴ *War Memoirs of Robert Lansing*, Westport, CT: Greenwood Press, 1970, pp. 257-258.

³⁵ Laurence Evans, *United States Policy and the Partition of Turkey, 1914-1924*, Baltimore: John Hopkins University Press, 1965, pp. 32-42.

թրիքային» և այլն), այնպես էլ նահանգներում լույս տեսնող տպագիր լրատվամիջոցների կողմից Հայոց ցեղասպանության արձագանքին՝ ինչպես որակական, այնպես էլ որոշ դեպքերում՝ քանակական առումներով:

Թեև Ամերիկյան մամուլը Հայոց ցեղասպանությանը օբյեկտիվ պատճառներով անդրադարձել է որոշակի ուշացումով և այդ իսկ պատճառով ամերիկյան մամուլի էջերում ըստ էության բացակայում էին հայերի տեղահանման մասին օսմանյան կառավարության որոշման մասին լուրերը, այսուհանդերձ եղած տեղեկություններն էլ բավարար էին պատկերացում կազմելու համար ցեղասպանական այն ծրագրի մասին, որ սկսվել էր իրագործվել 1915-ի գարնանից:

Ամերիկյան մամուլը 1915թ. հունվարին և ապրիլին տպել է հարցազրույցներ Թալաթի և Էնվերի հետ³⁶:

Ընդհանուր առմամբ ամերիկյան մամուլը, ընդհուպ մինչև 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները բավականին թույլ էր արձագանքում տեղի ունեցող ցեղասպանությանը և կատարվող իրադարձությունների մասին լրատվության զգալի մասը քաղված էր Պետքարտուղարության աղբյուրներից կամ միսիոներներից՝ դարձյալ նրանց հետ սերտորեն համագործակցող Պետքարտուղարության հսկողության տակ, ասել է թե՛ պաշտոնական Վաշինգտոնն էր որոշում՝ հրապարակել որևէ փաստ թե՛ ոչ:

1915թ. սեպտեմբերից Հայոց ցեղասպանության լուսաբանումն ամերիկյան մամուլում կորուկ ակտիվացավ, ինչը շարունակվեց մինչև հաջորդ տարվա սկիզբ:

Ամերիկյան պարբերականները նաև ընթերցողներին տեղյակ էին պահում հայերի շարունակվող կոտորածների և տեղահանությունների նկատմամբ ամերիկյան և այլ երկրների դիվանագետների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև կազմակերպությունների և անհատների արձագանքի, գործողությունների և հայտարարությունների մասին:

Ամերիկյան մամուլին նույնպես, ինչպես հասարակայնությանն ու պաշտոնական շրջաններին հետաքրքրում էր տեղի ունեցող ողբերգության հանդեպ Գերմանիայի դիրքորոշումը, և շատերը համարում էին, որ հենց Թուրքիայի դաշնակիցն է ի գորու կանգնեցնել կոտորածներն ու տեղահանումը:

«Նյու Յորք թայմս»-ը լրատվություն էր տպագրում նաև տեղի ունեցած կոտորածները դատապարտող և հայերին սատարող հավաքների ու հայտարարությունների մասին:

Ամերիկյան մամուլի էջերում կային նաև ԱՄՆ-ի ղեկավարության բռնած դիրքը քննադատող հոդվածներ, գրված ինչպես օրինակ՝ միսիոներներ ՄքՆոթոնի, Վիլիամ Շեդի, Ջոն Օթիս Բարրոուզի և այլոց կողմից:

«Լետաքրքրական ձևակերպումներ կան նաև ամերիկյան նահանգային մամուլում: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ի Մինեսոտա նահանգի «Դուուլոն նյուզ թրիբյուն» լրագրի էջերում ունի Ուիլիամ Էլիսի մի հոդվածում հայերի դեմ կատարված ոճիրն որակվում էր իբրև «ներկայիս արյան *ողջակհզում*» (the present holocaust of blood, շղատառերն իմն են-Տ.Ջ.)՝ օգտագործելով մի տերմին, որն այժմ 1940-1945թթ. նացիստական Գերմանիայի կատարած ցեղասպանությունն անվանելու համար է գործածվում³⁷:

Ամերիկյան մամուլն անդրադառնում էր հայերի տեղահանության ու կոտորածների իրականացման պատճառներին, դրա հետևանքով եղած մարդկային կորուստներն էին հաշվվում, ինչպես նաև անդրադարձ էր կատարվում կոտորածներից մազապործ եղած և

³⁶ Talaat Says Turks Fight for Life, The New York Times, February 18, 1915; Enver Says Turks Had to Fight, The New York Times, April 20, 1915.

³⁷ Christians Slain; Mission Bumed in Turks' Empire, by William T. Ellis, The Duluth News Tribune, 10 October, 1915.

տեղահանությունների հետևանքով նյութական ծայրահեղ դրության մեջ հայտնված հայերին օգնություն ցուցաբերելու հարցին:

«Նյու-Յորք թայմս» և այլ նշանակալից ամերիկյան պարբերականների՝ Հայոց ցեղասպանության լուսաբանման քանակական վերլուծությունը տալիս է հետևյալ պատկերը³⁸: 1915թ. ամռանը Հայոց ցեղասպանությունը սակավ լուսաբանվող թեմա է եղել, միայն օգոստոս ամսին է նկատվել որոշ աշխուժացում: Միտումն ուժեղանում է ողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում և իր գագաթնակետին հասնում հոկտեմբերի մոտավորապես առաջին կեսին: Փաստորեն հոկտեմբերի 4-ը եղավ մի կարևոր ուղենիշ, որից հետո ամերիկյան մամուլը հեղեղվեց հայերի կոտորածների և տեղահանման մասին լրատվությամբ, ինչպես նաև այդ փաստերի մեկնաբանություններով ու դրանց նկատմամբ դիրքորոշում արտահայտող հոդվածներով: Նյու Յորք թայմս և մի քանի այլ՝ հիմնականում միախոնեմական ուղղվածություն ունեցող լրատվամիջոցներում տպագրված Հայոց ցեղասպանության թեմային նվիրված հոդվածների ընդհանուր քանակի մոտ 1/3-ը բաժին է ընկնում 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակահատվածին³⁹:

1915թ. վերջին ամիսներին Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվության քանակը ամերիկյան մամուլում փոքր-ինչ նվազեց, սակայն կայունացավ բավական բարձր մակարդակի վրա, ապա՝ էլ ավելի ակտիվացավ 1916թ. հունվար-փետրվար ամիսներին: Հարկ է ընդգծել, որ այս դինամիկան միանգամայն համահունչ էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ակտիվացմանը Հայոց ցեղասպանության հարցում:

Ամերիկյան մամուլի կողմից Հայոց ցեղասպանության լուսաբանման կարևորագույն աղբյուրներ էին այն տեղեկատվությունները, որ ԱՄՆ էր հասնում Օսմանյան կայսրության տարբեր հատվածներում տեղակայված դիվանագիտական ներկայացուցիչների, միախոնեմերի, մասնավոր անձանց շնորհիվ, ինչպես նաև այլ երկրների մամուլից արված արտատպությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվությունն ու ամերիկյան մամուլում քարոզչական պայքարը կենտրոնական տերությունների և Անտանտի միջև» անդրադարձ է կատարվում հայերի տեղահանության և կոտորածների լուրերի նշանակությանը և արձագանքին Առաջին աշխարհամարտի քարոզչական թատերաբեմում: Ներկայացվում են գերմանական և թուրքական կողմերի քարոզչական գործողությունները ԱՄՆ-ի մամուլում:

Հայոց ցեղասպանության մասին լրատվությունն ամերիկյան մամուլի էջերում ուներ խիստ շոշափելի ենթատեքստ՝ այն մեղադրում էր Համաշխարհային պատերազմում ընդգրկված պետություններից Օսմանյան կայսրությանը՝ մարդկայնության դեմ հանցագործություններ կատարելու և նրա գլխավոր դաշնակցին՝ Գերմանիային, դրանք աչքաթող անելու, սքողելու, իսկ երբեմն էլ՝ աջակցելու մեջ: Նկատի ունենալով Համաշխարհային պատերազմում քարոզչական ճակատի աննախընթաց կարևոր դերը և մասնավոր Անտանտի և Գերմանիայի միջև ԱՄՆ-ի հասարակության համակրանքը շահելու համար ընթացող համառ պայքարը⁴⁰, հայերի կոտորածների մասին լուրերն

³⁸ Թանկահան վերլուծությունը կատարվել է մեր կողմից՝ հիմնվելով «Նյու-Յորք թայմս», «Բոստոն գլոբ», «Չիկագո դեյլի նյուզ» օրաթերթերի 1915թ. մայիսից 1916թ. մայիս ընկած ժամանակահատվածում նյութերի ընդհանուր վերլուծության վրա:

³⁹ Richard D. Kloian, ed., The Armenian Genocide: News Accounts from the American Press (1915-1922), Berkeley 1985, Introduction, p. XVII.

⁴⁰ G. Jowett, V. O'Donnell, Propaganda and Persuasion, Thousand Oaks, CA.: Sage Publications, 2006, p.122; M. Kunczik, British and German Propaganda in the United States from 1914 to 1917, (paper presented at the IAMCR conference in Seoul, July 1994), Institut für Publizistik Johannes-Gutenberg Universität, Mainz, p. 2.

առատ նյութ էին տալիս հակազերմանական, հակաթուրքական և անտանտամետ քառզույթյուն իրականացնելու համար:

Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ քարոզչական պայքարին, այսպիսով և՛ ԱՄՆ-ում հայամետ քարոզչություն տարածողները գտնվում էին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիվանագիտության ուշադրության կենտրոնում:

Նրանց նպատակները ընդհանուր առմամբ չէին հակասում նաև ԱՄՆ-ի այն ժամանակվա արտաքին քաղաքականությունը ղեկավարողների պլաններին, որոնք պատրաստվում էին անհրաժեշտության դեպքում Անտանտի կողմից Գերմանիայի դեմ պատերազմի մեջ մտնելու⁴¹:

Սակայն թուրքական և գերմանական դիվանագետներն ու մերձիշխանական այլ ուժերը քարոզչական պայքարում անհադորդ դիտորդի դերում չէին:

Սեպտեմբերի վերջերից ամերիկյան մամուլում իրար հետևից հայտնվեցին թուրքերի գործողությունները պաշտպանող հայտարարություններ, որոնց հեղինակներն էին ինչպես թուրք, այնպես էլ գերմանացի պաշտոնյաներ կամ առանձին անհատներ:

Դրանց հեղինակները փորձում էին հերքել, մեղմացնել, արդարացնել մասսայական կոտորածների փաստը և ավելին՝ հակամեղադրանքներ էին առաջ քաշում հայության դեմ, որ վերջիններս ապստամբել էին օսմանյան կառավարության դեմ և զինված դիմադրություն են ցույց տվել օսմանյան իշխանություններին՝ համագործակցելով նրանց թշնամու հետ:

Այդ հերյուրանքներին և մտացածին պնդումներին դեմ հանդես եկան ամերիկահայ անհատներ ու կազմակերպությունները, ինչպես Հայկական ընդհանուր առաջադիմական միության նախագահ Սմբատ Գաբրիելը և Ամերիկահայերի միության անդամ Արշակ Մահտեսյանը, այնպես էլ ամերիկացի գործիչներ, ինչպես օրինակ՝ Հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի քարտուղար Ս. Դաթթընը⁴²:

Ամերիկյան մամուլում ծավալվող իրադարձություններին՝ մասնավորապես Հայոց ցեղասպանության լուսաբանմանը անտես ձեռքով հետևում և այն կարգավորում էր ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը: 1915թ. սեպտեմբերի կեսերին ԱՄՆ-ում Վիլսոնի վարչակազմին մոտ կանգնած միսիոներների ուժերով ստեղծվեց Հայկական կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեն, որը կես ամսվա ընթացքում հավաքեց և խմբագրեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան դիվանագետների բազմաթիվ վկայություններ: Կոմիտեի նախագահ, ՕԱԼԱՆ-ի քարտուղար Ջ. Բարտոնը 1915թ. հունիսից Պետքարտուղարությունից իրավունք էր ստացել սահմանափակ չափով օգտվել Պետքարտուղարության արխիվներից: Հոկտեմբերին արդեն Բարտոնին ընձեռված իրավունքների շրջանակը զգալիորեն ընդլայնվեց, ինչի շնորհիվ կոմիտեն կարողացավ 1915թ. հոկտեմբերի 4-ին հրապարակել վերոհիշյալ փաստաթղթերից կազմված մամուլի համար նախատեսված հաղորդագրությունը⁴³: Կազմված հաղորդագրությունում որևէ աղբյուր չէր նշվում, մի կողմից դրանց հեղինակների անվտանգության նկատառումով, իսկ մյուս կողմից՝ այն պատճառով, որ ԱՄՆ-ի կառավարությունը խուսափում էր այդ հրապարակումներում իր պաշտոնական մասնակցությունը հայտարարելուց:

⁴¹ Daniel M. Smith, Robert Lansing and the Formulation of American Neutrality Policies, 1914-1915 in *The Mississippi Valley Historical Review*, Vol. 43, No. 1, (Jun., 1956), p. 80.

⁴² Armenian Women Put up at Auction, *The New York Times*, September 29, 1915. Նույնա բովանդակ մեկ այլ հոդված ավելի վաղ տպագրվել էր «Չիկագո դեյլի թրիբյուն»-ում: Տես՝ Ask Americans to End Slaying: Board Says 500,000 Armenians Are Victims of the Turks, *Chicago Daily Tribune*, September 27, 1915.

⁴³ A. Sarafian, *The Paper Trail*, the American State Department and the Report of Committee on Armenian Atrocities, in *Revue du monde arménien moderne et contemporaine*, tome 1, Paris, 1994, p. 127.

Հայոց գեղասպանության մասին լուրերին իր ժամանակին արձագանքել են ամերիկյան ականավոր քաղաքական, մշակույթի և հասարակական գործիչները, ինչպես օրինակ՝ ամերիկյան նշանավոր մոդեռնիստ բանաստեղծ, քննադատ և հասարակական գործիչ Էզրա Փաունդը, ժամանակի հայտնի ամերիկյան լրագրող, երգիծաբան, էսսեիստ Հենրի Լուիս Մենկենը, ամերիկյան լրագրող Հերբերթ Ա. Գիբոնսը, ով լինելով Մերձավոր Արևելքում՝ մոտիկից ծանոթ եղավ հայերի նկատմամբ ծրագրված և իրագործված գեղասպանությանը, հեղինակեց 1916թ. հրատարակված «Ժամանակակից մարդկության պատմության ամենասևեռը, իրադարձությունները Հայաստանում 1915թ.» գրքույլը և ուրիշներ:

Այնուամենայնիվ միսիոներների և այլ «հայամետ» խմբակցությունները հիմնականում կոչ չէին անում, որպեսզի ԱՄՆ-ը պատերազմ սկսեր Օսմանյան կայսրության դեմ: Եթե ԱՄՆ-ում հայկական խմբակցությունները հիմնականում պայքարում էին, որպեսզի ԱՄՆ-ն ավելի կոշտ քաղաքականություն որդեգրեր՝ ներառյալ և զինված միջամտությունը, ապա միսիոներներին կոնկրետ խնամատարական գործունեության անխափան աշխատանքն առավել կարևոր էր թվում, ինչը թերևս ստեղծված պայմաններում ողջամիտ որոշում էր:

Երրորդ ենթագլխը՝ «Հայերի օգտին մարդասիրական օգնության կազմակերպումը և դրամահավաքը» անդադառնում է 1915-ի ամռանից տարերայնորեն սկսված, իսկ նույն թվականի աշնանը արդեն կազմակերպականորեն ամրապնդված և ԱՄՆ-ի կառավարությանը մերձ գտնվող միսիոներների և այլ անձանց ակտիվ մասնակցությամբ ձևավորված մարդասիրական շարժմանը կազմակերպմանը և գործունեությանը: Ընդամին հատուկ ուշադրություն է դրանում դարձվում ԱՄՆ-ում ծավալված հանգանակությունների արշավին և դրա արդյունքներին:

Հայերի գանգվածային տեղահանումների դեռ առաջին իսկ շաբաթներից Օսմանյան կայսրության տարբեր հատվածներում ամերիկյան հյուպատոսների և միսիոներների կողմից տարերայնորեն սկսվեց մարդասիրական շարժումը, որի ակտիվ հասավ մինչև ԱՄՆ, որտեղ էլ այն ստացավ իր կազմակերպական վերջնական տեսքը:

ԱՄՆ-ում հայերի օգտին կազմակերպված մարդասիրական շարժումը ծավալվեց 1915թ. աշնանից, երբ ամերիկյան մամուլը լի էր հայերի նկատմամբ գործված դաժանությունների մասին հաղորդագրություններով, և ամերիկյան հասարակության վրդովմունքն այդ կապակցությամբ մակընթացության մեջ էր:

Դեպքան Հ. Մորգենթաուի կոչով և ամերիկյան իշխանությունների գիտության պայմաններում 1915թ. հոկտեմբերի 1-ին Օսմանյան կայսրությունում տուժած հայերի օգնության նպատակով ստեղծվեց Հայկական օգնության կոմիտեն (Armenian Relief Committee ARC):

Հայկական օգնության կոմիտեի, ապա և 1915-ի նոյեմբերից՝ դրա իրավահաջորդ Հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեի (ACASR-ՀՍՕԱԿ) ծավալած մարդասիրական շարժման գլուխ էին կանգնած ԱՄՆ-ում ազդեցիկ և հարգված մարդիկ, ինչպես օրինակ Քլիվլենդ Ռոջը, Չարլզ Քրեյնը, Հենրի Մորգենթաուն, Ջեյմս Բարտոնը, և ուրիշներ, որոնք այս կամ այն չափով կապեր ունեին և՛ նախագահ Վ. Վիլսոնի և՛ միսիոներական շրջանների հետ՝ որոշ դեպքերում իրենք լինելով այդ այդ շրջաններում կարևոր դեմքեր:

ՀՍՕԱԿ-ը կազմակերպում էր ԱՄՆ-ում հայերի օգնության համար միջոցների հավաքագրումը՝ միաժամանակ իրենց ազդեցությունն օգտագործելով թուրք-ամերիկյան հնարավոր բախումը կանխելու նպատակով⁴⁴:

⁴⁴ Նույն տեղում, pp. 56-57, տես նույնպես J. Barton, Story of Near East Relief, pp. 3-19.

ԱՄՆ-ում կոմիտեի գործունեության կարևորագույն նպատակը դրամահավաքն էր, որի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ էր, որ ամերիկյան հասարակայնությունը տեղյակ լիներ իրենից հազարավոր մղոններ հեռու պարող ժողովրդի ողբերգությանը:

Կարելի է փաստել, որ ամերիկյան օգնությունը, թեև զգալի չափով տեղի ունեցավ ամերիկյան ժողովրդի և որոշ մեծահարուստների աջակցությամբ նվիրատվությունների շնորհիվ, նրա կազմակերպումը կատարվում էր ոչ ինքնաբերական, որոշակիորեն ուղղորդվում էր Վիլսոնին մերձակա անձանց կողմից և ըստ էության Հայոց ցեղասպանության նկատմամբ ամերիկյան քաղաքականության ոչ այնքան պարզորոշ արտահայտված, սակայն անքակտելի մասն էր:

Անսպասելի 1916թ. փոտրվարի 9-ի կոնգրեսի գույզ պալատների համատեղ ընդունած որոշմանը՝ 1916թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը ստորագրեց մի հրամանագիր, որով նույն տարվա հոկտեմբերի 21-ն ու 22-ը հայտարարվում էին հայերի ու սիրիացիների օգտին կազմակերպվող հանգանակությունների օրեր⁴⁵:

Ամերիկյան հանգանակությունները զգալի ծավալների հասան 1916 և 1917 թվականներին: Ընդհանուր առմամբ, 1917թ. մարտի դրությամբ, կոմիտեն բաց էր թողել 2,485,761 դոլար, իսկ գանձարկղում դեռ մնում էր 256,626 դոլար: Կ. Պոլիս փոխան ցված գումարը հետագայում վերաբաշխվել էր Օսմանյան Կայսրության մի շարք վայրերում գտնվող հայ գաղթականներին⁴⁶:

ԱՄՆ-ից ուղարկված օգնությունը տեղ հասցնելը պահանջում էր կազմակերպական մեծ ջանքեր, հաճախ՝ պետական մակարդակով, ինչպես ասենք՝ ամերիկյան ռազմածովային նավատորմի նավեր ուղարկելու տեսքով: Օսմանյան կայսրության միջերկրածովյան ափերը շրջափակած դաշնակիցների նավատորմը միայն որոշակի բանակցություններից հետո էր թույլատրում ամերիկյան նավերի անցումը դեպի թուրքական նավահանգիստներ⁴⁷:

Ամերիկյան դիվանագիտության անխնայ աշխատանքը՝ ուղեկցված որոշակի ճնշմամբ, ինչպես նաև Օսմանյան կայսրության ղեկավարների կողմից՝ ԱՄՆ-ի որոշակի բարեհաճությունը չկորցնելու ցանկությունն է հավանաբար պատճառ եղել, որ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնում Վ. Մորգենթաուին հաջորդած Աբրամ Էլկոսին հաջողվել է տարազրյալ հայերին օգնություն հասցնելու թույլտվություն ստանալու հարցում նշանակալի հաջողությունների հասնել⁴⁸:

Չորրորդ ենթագլխում՝ «Մարդասիրական օգնության տնօրինումն ու բաշխումը» ենթակայացվում է ԱՄՆ-ում հավաքագրված և կուտակված ֆինանսական և նյութական միջոցների բաշխման մեխանիզմները, դրանց կոնկրետ օրինակներ են բերվում, ներկայացվում է դրա աշխատանքային ընթացքը, ինչպես նաև այն դիվանագիտական քայլերն ու պետական շահերը, որոնք առնչվում էին մարդասիրական գործողությանը: Այդ համատեքստում դիտարկվում է մասնավորապես Գերմանիայի կողմից ամերիկյան մարդասիրական օգնության որոշակի քաջալերումն ու կազմակերպական օժանդակությունը, ինչը որպես դրական քարոզչություն էր ընկալվում այդ երկրի դիվանագիտական ներկայացուցիչների կողմից:

⁴⁵ *The Armenian Genocide: Documents and Declarations, 1915-1995*, compiled and introduced by H. Sassounian, Glendale, 1995, p. 22.

⁴⁶ Армянский вестник, N 29/30, 1917, стр. 18.

⁴⁷ John DeNovo, p. 104.

⁴⁸ Abram I. Elkus., *The Memoirs of Abram Elkus: Lawyer, Ambassador, Statesman, with a critical commentary by Hilmar Kaiser*, Reading (UK): Taderon Press, 2004, pp. 65-66.

Ամերիկյան մարդասիրական օգնության բաշխման երկու հիմնական աշխարհագրական տարածաշրջան կար, որոնցից ամենակարևորն Օսմանյան կայսրության մաս կազմող Սիրիան էր և հարակից շրջանները, ուր ապաստանել էին հայ տարագրյալները, և Կովկասն ու Արևմտյան Հայաստանի՝ ռուսական գործերի կողմից գրավված շրջանները:

Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Վ. Սմիթի ներկայացրած տվյալների համաձայն, 1915թ. Կովկասում 300,000 հայ գաղթական կար, որոնց համար տեղում ռուսական իշխանությունները և հայերի հատկացրած օգնությունը բավարար չէր: 1915թ. ամռանը Վանից նահանջից հետո, երբ քաղաքում տեղակայված մի խումբ ամերիկյան միսիոներները հայ գաղթականների հետ միասին հայտնվեցին Կովկասում, հնարավոր եղավ այդ միսիոներներին օգնությամբ ստեղծել ևս մի տեղական օգնության կոմիտե՝ տեղում կազմակերպելու համար օգնության բաշխումը:

1917թ. սկսած Երևանում և Ալեքսանդրապոլում գործողության մեջ դրվեց մի ծրագիր, համաձայն որի ընդունվում էր «աշխատանք՝ իբրև օգնություն» բանաձևը: Դրանով գաղթականները վաստակում էին իրենց օրեկան հացը՝ մյուսների համար օգնության միջոցներ արտադրելով, իսկ նրանց աշխատանքային գործիքներն իրենց հերթին արտադրում էին գաղթականների կողմից⁴⁹: Գյուղերում փորձ էր արվում գաղթականներին դարձնել ինքնաբավ, նրանց տրամադրվում էին լծկան և այլ անասուններ⁵⁰:

Կովկասում ՀՍՍՀ-ի գործունեության կարևորագույն մաս էր որբայնամությունը, որը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանից անմիջապես հետո ստացավ աննախընթաց չափ: Տարածաշրջանում, ըստ Բարսոնի 1917թ. սկզբներին բերած տվյալների, 15-17,000 անհայր երեխաներ կային, իսկ Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Վ. Սմիթի տվյալների համաձայն, 1917թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին, կային մոտ 40,000 որբ երեխաներ: Կոմիտեն իր վրա վերցրեց այդ որբ երեխաների մի մասի խնամակալությունը: 4,000 լրիվ ծնողագուրկ երեխաներ գտնվում էին կոմիտեի խնամքի տակ՝ ամսական 2 դոլար մարդագլուխ հաշվով:

Ամերիկյան կոմիտեն նաև մշակել էր Արևմտյան Հայաստանի ազատագրված հատվածներում բնականոն կյանքի անցման և այդ տարածքներ վերադարձող արևմտահայերի կենսապահովման ծրագիր, որը գործողության մեջ դրվեց 1916թ. գարնանից:

Եթե ռուսական իշխանություններն ընդհանուր առմամբ բարեհաճ են վերաբերվել ամերիկյան մարդասիրական օգնությանը տարագրյալ հայերին, ապա բոլորովին այլ պատկեր էր Օսմանյան կայսրությունում:

Թուրքական իշխանությունները ձգտում էին հնարավորինս հեռու պահել օտարերկրացիներին հայերից ինչպես նաև իրենց վերահսկողության տակ դնել հայերին օգնության բաշխումը, մի բան, ինչն անուղղակիորեն նշանակում էր այդ օգնության չհասնելը նպատակին:

Այնուամենայնիվ, 1915թ. հոկտեմբերին օսմանյան իշխանությունների կողմից իր տարածքում Ամերիկյան կարմիր խաչի գործունեության նկատմամբ հարուցած արգելքը վերադրվում է, իսկ 1916թ. ապրիլին, ԱՄՆ-ի կարմիր խաչը ստանում է թույլտվություն Օսմանյան կարմիր մահիկի հետ համագործակցությամբ օգնություն տրամադրել Օսմանյան կայսրության սովյալ քաղաքացիներին՝ ինչպես մահմեդական այնպես էլ

⁴⁹ J. L. Barton, *Story of Near East Relief*, New York: Macmillan, 1930, p. 84.

⁵⁰ Նույն տեղում:

քրիստոնյա⁵¹, ինչը պետք է համարել ամերիկյան դիվանագիտական ջանքերի հաղթանակ:

Հայ վերապրողների էլ ավելի նոսրացած խմբերին ամերիկյան օգնությունը որոշակիորեն թույլատրվեց 1917թ., երբ ցեղասպանությունն արդեն իրողություն էր, և հայերի քիչ թե շատ խոշոր վերջին խմբերը ոչնչացվել էին Դեյր էզ Ջորի, Ռաքքայի և Սիրիայի անապատային այլ շրջաններում.:

ԱՄՆ-ում հավաքված նյութական միջոցների և մասնավորապես՝ դրամի տեղ հասցնելը եղել է բավական բարդ ու խոչընդոտներով լի գործընթաց, որին ուշի-ուշով հետևել են թուրքական իշխանությունները՝ հնարավորության դեպքում փորձելով կանխել դա և բաշխումն իրականացնելու նպատակով հարկ էր լինում անընդհատ գտնել նորանոր, հաճախ՝ քնդհատակյա ուղիներ:

Հայկական և սիրիական կազմակերպությունները մեծ չափով օժանդակում էին օգնությունը տեղ հասցնելու գործում:

Ինչպես ցույց է տալիս Հ. Կայզերի ուսումնասիրությունը, մասնավորապես Հալեպի նահանգում հայերին մարդասիրական օժանդակություն հասցնելու խնդրում մեծ էր գերմանա-ամերիկյան համագործակցության դերը, որոնք իրար փոխլրացնող ցանցեր էին: Ամերիկյան մարդասիրական կազմակերպությունները շատ ավելի նյութական միջոցներ ունեին, քան նրանց գերմանական գործընկերները, մինչևիտե գերմանական միսիոներներն օգտվում էին Գերմանիայի ազդեցությունից բխող որոշակի առավելություններից, այլ կերպ ասած՝ օգնությունը տեղ հասցնելու համար ավելի շատ լծակներ ունեին, քան իրենց ամերիկացի գործընկերները⁵²:

Ֆինանսական և նյութական օգնության բաշխմանը օժանդակել են գերմանական դիվանագիտական ներկայությունները, միսիոներական կազմակերպությունները, այլ կազմակերպություններ, ինչպես «Բեռլին-Բադդադա» երկաթուղին և «Դոյչե օրիենտ բանկը»:

ԱՄՆ-ի կողմից Գերմանիայի դեմ պատերազմի մեջ մտնելուց և թուրք-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո էլ, ինչպես երևում է գերմանական արխիվային փաստաթղթերից, գերմանական դիվանագիտական պաշտոնյաները օգնության բաշխման հարցում չեն դադարել ամերիկյան հաստատությունների և անհատների հետ համագործակցությունը և հոգ էին տանում արդեն ստացված միջոցները տեղ հասցնելու համար⁵³:

Օսմանյան կայսրությունում ամերիկյան խնամատարությանը կանաչ լույս վառելով՝ Գերմանիան փորձում էր հետ մղել իր դեմ քարոզչական այն հարձակումը, որի սուր ծայրում գրավված Բեյզիայի, որոշ չափով և՛ հայերի կոտորածներն ու տեղահանության հիմնախնդիրներն էին: Գործելով իրենց շահերի շրջանակում՝ ամերիկյան միսիոներների և գերմանական կառավարող շրջանների շահերի սույն համընկումը ձեռնտու էր նաև հազարավոր սովահար և մահապարծ տեղահանված արևմտահայ զանգվածներին, որոնց ամերիկյան օգնությունը հասնում էր անգամ ԱՄՆ-ի՝ համաշխարհային պատերազմ մտնելուց հետո:

ԱՄՆ-ի մարդասիրական օժանդակությունն եղավ շատ հայ տարագրյալների համար այն հույսը, որ օգնեց նրանց գոյատևել Հայոց ցեղասպանության դժոխակ ժամա- նակաշրջանում:

⁵¹ VI. Continental Europe, in Political Science Quarterly, Vol. 31, No. 3, Supplement (Sep., 1916), pp. 60-61.
⁵² Hilmar Kaiser, At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917, Reading, UK: Taderon Press, 2001, p. 45.
⁵³ Deutschland-Amenien, Dok. Nr. 340-343, 346, 348-349 SS. 344-345, 347-348.

Եզրակացությունում ամփոփվում է ի մի են բերվում ատենախոսության հիմնական դրույթները լուսաբանող կարևորագույն փաստերն ու դրանցից արվում են ատենախոսություն վերջնադրույթ հանդիսացող հետևություններ, մասնավորապես.

ա. Հայոց ցեղասպանությանը արձագանքելիս ԱՄՆ-ն առաջնորդվել է Օսմանյան կայսրությունում և տարածաշրջանում իր բազմաբնույթ շահերով, որոնցից գլխավորը տարածաշրջան լսադաղ ներթափանցմանը միտված միսիոներական գործունեությունն էր:

բ. Ամերիկյան դիվանագետները և միսիոներներն ակտիվորեն տեղեկագրել են Հայոց ցեղասպանության ծավալման մասին, երբեմն լինելով դրանց ակնատեսներն ու եզակի առիթ ունենալով լսելու դրանց հեղինակների դատողություններն ու հայտարարությունները: Այս ամենը մեծ արժեք է տալիս Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան վավերագրերին:

գ. Հայերի կոտորածներն ու տեղահանություններն ԱՄՆ-ի շահերին վնաս էին հասցնում և ամերիկյան դիվանագետների գործողություններում եղել է դրա գիտակցումը, սակայն 1915-1917թթ. իբրև ամերիկյան դիրքորոշման անկյունաքար՝ մնացել է այդ երկրի չեզոքությունն Առաջին աշխարհամարտում:

դ. ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը հայերի կոտորածներին արձագանքել է օսմանյան իշխանություններին հասցեագրված մի քանի բողոք հղելով՝ սպառնալով ամերիկյան և համաշխարհային հասարակական բացասական կարծիքով, փորձելով այդ գործողություններում ներգրավել նաև Գերմանիայի ջանքերը: Կ. Պոսլում ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչների կողմից բազմիցս եղել են քաղաքական առաջարկներ՝ սպառնալ կամ խզել հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ, որոնք չեն ընդունվել:

ե. Ընդհանուր առմամբ անհաջողություն կրելով հայերի կոտորածները և տեղահանությունները զսպելուն ուղղված դիվանագիտական ջանքերում՝ ԱՄՆ-ի վարչակազմը տեղի ունեցածն ընկալել է իբրև կատարված փաստ և կենտրոնացել կենդանի մնացածներին մարդասիրական օգնության ապահովման վրա՝ այդ գործում լայնորեն համագործակցելով Վիլսոնի անձնական մտերիմների և վարչակազմին մոտ կանգնած միսիոներական շրջանակների հետ:

զ. ԱՄՆ-ը, նաև նախագահ Վիլսոնին մոտ գտնվող միսիոներների լոբբիի ազդեցությամբ, խուսափել է Օսմանյան կայսրության հետ զինված բախման մեջ մտնելուց, նույնիսկ 1917թ. ապրիլին Առաջին համաշխարհային պատերազմ մտնելուց և Գերմանիայի դրդմամբ Օսմանյան կայսրության հետ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո էլ: Չնայած այդ հարցում կարծիքների ոչ միանշանակությանը, պետք է արձանագրել, որ ուժային գործողությունների բացակայությունը դրականորեն է ազդել տեղահանված արևմտահայության բեկորներին օգնության միջոցների բաշխման վրա:

է. Ամերիկյան հասարակությունը լայնորեն տեղեկացվել է Հայոց ցեղասպանության մասին ամերիկյան մամուլի միջոցով, որին էլ ներքին ուղիներով առատորեն նյութ է մատակարարել հենց պաշտոնական վաշինգտոնը՝ սրանով ազդելով նաև երկրի ներսում հասարակական կարծիքի վրա:

ը. Ամերիկյան դիվանագիտությանը հաջողվել է ապահովել ամերիկյան օգնության բաշխումը Միդիայում և տարագրյալների կենտրոնացման այլ վայրերում, և այն 1917թ. ապրիլից հետո էլ շարունակվել է՝ նաև շնորհիվ գերմանական համապատասխան կառույցների, որոնք դա կատարել են գերմանական ղեկավարության և դիվանագիտության հավանության պայմաններում:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայոց ցեղասպանության լուսաբանումը ԱՄՆ մամուլում (1915-1917 թթ.), Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N 4, Երևան, 2001, էջ 71-83:

2. ԱՄՆ-ի շահերը Օսմանյան կայսրությունում և մարդասիրական օժանդակությունը Հայոց ցեղասպանությունից վերապրածներին (1915-1917), Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N 5, Երևան, 2002, էջ 82-97:

3. Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2002, 52 էջ:

4. ԱՄՆ-ի հնարավոր ներգրավումը Առաջին աշխարհամարտում 1915-1916 թթ. և Հայոց ցեղասպանությունը, Մերձավոր Արևելք, հ. IV, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 42-45:

5. Ամերիկյան միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում և հայերը. պատմագրության և մեթոդաբանության հարցեր, Մերձավոր Արևելք, հ. V, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հոդվածների ժողովածու, Երևան, 2008, էջ 62-68:

ЗАКАРЯН ТИГРАН АРУТЮНОВИЧ

ГЕНОЦИД АРМЯН И СОЕДИНЕННЫЕ ШТАТЫ АМЕРИКИ (1915 -1917)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 7-го октября 2011 г. в 14⁰⁰ по адресу: г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализованного совета 004 при Институте истории НАН РА

РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, трех глав и заключения, а также из списка использованной литературы.

Во введении предстала проблематика, научное новшество, источники и теоретические подходы использованные в диссертации.

В первой главе диссертации рассматриваются османско-американские отношения до геноцида армян, сосредотачивая внимание на такие вопросы как деятельность американских миссионеров среди западных армян, экономические и геостратегические интересы США в Османской империи и роль армян в них, роль американского политического мессианизма в политике США по отношению к Османской империи, а также турецко-американские отношения в время Первой мировой войны и последствия геноцида армян на интересы США в регионе.

Вторая глава посвящена доложениям американских дипломатов и миссионеров о резнях и депортациях армян во время Первой мировой войны а также вмешательств и официальных реакций США на эти действия. В главе затрагиваются вопросы осведомления американскими дипломатами и миссионерами о резнях и депортациях западных армян, откликов на них со стороны американских дипломатов в регионе и Гос. департамента, формирования общей политики вильсоновской администрации в этом вопросе и альтернатив этой политике, в том числе и объявления войны против Османской империи.

Третья глава сосредотачивается на общественном и гуманитарном отклике на геноцид армян. В главе рассматриваются такие вопросы как освещение геноцида армян в американской прессе, анализируются материалы прессы на фоне пропагандистской войны между Антантой и Центральными государствами за поддержку со стороны американского общественного мнения, затрагиваются вопросы гуманитарного отклика США, в том числе и сбора финансовых средств, проведении благотворительных и информационных акций выражающих солидарность с армянами, а также распределении средств помощи выжившим армянам и попыток американских дипломатов облегчить распределение помощи.

Заключение завершает и подводит главные итоги диссертации, которые могут быть изложены следующим образом:

1. США в своем отклике на геноцид армян руководствовался своими интересами, которые были сосредоточены на миссионерской деятельности.
2. Американские дипломаты и миссионеры подробно докладывали о геноциде армян иногда имея возможность личного общения с организаторами и исполнителями геноцида.
3. Геноцид армян негативно отражался на американских интересах и это понималось, однако США придерживалось политики нейтралитета в 1915-1917 гг.
4. Отклик США состоял в нескольких нотах протеста и попытках вовлечь Германию на свою сторону в этом вопросе, однако предложения разорвать отношения с Османской империей и/или занять более жесткую позицию не были одобрены руководителями внешней политики США.
5. В целом терпя неудачу со своих попытках остановить резню и депортацию армян, администрация США восприняла эти действия как уже совершенный факт и сконцентрировал свои усилия над гуманитарными действиями с этой целью сотрудничая с миссионерскими кругами.
6. В том числе и под давлением миссионерских лоббистов, США воздержалось от военной конфронтации с Османской империей, даже после того как США вступила в Первую Мировую Войну. Даже при разных оценках этой политики, надо отметить, что это позитивно отразилось на деле оказания помощи выжившим и депортированным Армянам.
7. Американская общественность была проинформированна о геноциде армян главным образом через прессу, которому передавали материалы от Гос. Департамента которая тем самым воздействовала на общественное мнение в своей стране.

8. Дипломатии США удалось обеспечить распределение американской помощи в Османской империи, которая не была прервана с вхождением США в Первую Мировую Войну в 1917 г. и при поддержке со стороны руководства и дипломатов Германии.

TIGRAN ZAKARYAN HARUTYUN

THE ARMENIAN GENOCIDE AND THE UNITED STATES OF AMERICA
(1915-1917)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on 7 October 2011, 14⁰⁰ at the Session of the Specialized Council 004 by the Institute of History of the Academy of Sciences of RA (Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4)

SUMMARY

The present dissertation tackles the problem of the U.S. official and unofficial reaction during the Armenian Genocide on the background of the U.S. interests and policies in the Ottoman Empire and vis-à-vis Western Armenians. For that purpose the main research questions were posed, such as the American interests and policies in the Ottoman Empire before the World War I and the role of Armenians therein, reporting on the Armenian Genocide by American diplomats and missionaries, the official U.S. stance towards those events, the U.S. press and public, as well as humanitarian reaction to the Armenian genocide, and the role of the U.S. administration in that reaction.

The dissertation is composed of introduction, three chapters and summary, as well as bibliography.

The introduction dwells on the problematic of the dissertation, its academic novelty, sources, and theoretical approaches.

The first chapter discusses the Ottoman-American relations before the Armenian Genocide, concentrating on such issues as the American missionary activities among the Ottoman Armenians, U.S. economic and geostrategic interests in the Ottoman Empire, the role of Armenians therein, the role that American political messianism played in the U.S. policies towards the Ottoman Empire as well as the U.S.-Turkish relations during the World War I and the impact of the Armenian genocide on the American interests in the region.

The second chapter is devoted to American diplomats' and missionaries' reports on the massacres and deportations of Armenians during the World War I as well as the U.S. interventions and official reaction thereon. The chapter tackles the issues of reporting on the

massacres and deportations of the Ottoman Armenians by U.S. diplomats and missionaries, interventions by the U.S. State Department and American diplomats in the region, the formation of general policies of the Wilson Administration towards this issue and its foreign policy options, including that of declaring war against the Ottoman Empire

The third and last chapter concentrates on the public and humanitarian reaction to the Armenian genocide. The chapter reviews such problems as the U.S. press coverage of the Armenian genocide, analyses it viewing the issue also against the background of the propaganda war between the Entente and the Central States for winning over the American public opinion, tackles the issues of the U.S. humanitarian outcry, including fund-raising, conducting charitable and informative pro-Armenian events, as well as the distribution of funds and other aid to the Armenian survivors and U.S. diplomats' efforts at facilitating their distribution.

The summary concludes and summarizes the main outcomes of the dissertations which could be briefly stated as follows:

1. The U.S. in reacting to the Armenian genocide was guided by its interests concentrated on the missionary activities in the region.

2. American diplomats and missionaries reported extensively on the Armenian genocide having the opportunity sometimes to personally contact the masterminds and executors of the genocide.

3. Armenian genocide was touching U.S. interests negatively and it was realized yet the U.S. stuck to a neutrality policy between 1915 and 1917.

4. As an official reaction the U.S. contented itself with some protests and attempts at enlisting Germany's cooperation, yet suggestions to break relations and/or take a tougher stand were ignored by the U.S. foreign policy makers.

5. Largely failing in diplomatic efforts to stop massacres and deportations, the U.S. administration took them as a fait accompli and concentrated instead on humanitarian efforts cooperating with missionary circles.

6. Under the influence of missionary lobbying too, the U.S. abstained from a military confrontation with the Ottoman Empire, even after entering the World War 1 in 1917. Even if opinions on this differ, it is to be registered that this fact told positively on assisting the surviving Armenian deportees.

7. The American public was largely informed on the Armenian genocide through the U.S. press which was provided with materials by the U.S. State Department which thus influenced the home public opinion.

8. The U.S. diplomacy succeeded in securing the American aid distribution in Ottoman Empire and it continued under the support of German high officials and diplomats after U.S. entering the World War 1 in 1917.

